**Արձանագրություն N 3**

**ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-71 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի**

**ք.Երևան** **« 20» 11. 2026թ. ժամը 11:30**

**Մասնակցում էին՝**

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության կոմունալ շահագործման բաժնի պետի պարտականությունները կատարող
Ի. Սաֆարյան-հանձնաժողովի նախագահ,
ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության կոմունալ շահագործման բաժնի գլխավոր մասնագետ
Լ. Ստեփանյան-գնահատող անդամ,
ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության կոմունալ շահագործման բաժնի գլխավոր մասնագետ
Կ. Ավդալյան- գնահատող անդամ,
ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ
Է. Մնացականյան -գնահատող հանձնաժողովի քարտուղար

**1. Օրակարգ՝**

ՀՀ ՆԳՆ կարիքների համար ջեռուցման սարքերի գազի և էլեկտրական ջեռուցման կաթսաների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-71** ծածկագրով գնահատման նիստը կասեցվել էր 1 աշխատանքային օրով և **«ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊ Ընկերությանն** առաջարկվել էր 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

**2. Տվյալներ՝ շտկված հայտի ուսումնասիրման և գնահատման մասին.**

**«ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊ Ընկերության** կողմից սահմանված ժամկետում ներկայացված հայտի շտկում չի կատարվել:

**3. Հանձաժողովը որոշեց՝**

**3.1** Գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի

ա. ենթակետի պահանջներով **ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-71** ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից՝ **«ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊ Ընկերության** ներկայացրած հայտը գնահատում է անբավարար և մերժում է:

**3. 2 ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-71** ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում միջոցներ կձեռնարկվեն **«ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ»** ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացնելու լիազոր մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

**3. 3 ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-71** ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով մրցույթը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարել չկայացած, այն է՝ «հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին»:

Հանձնաժողովի նախագահ՝ Ի. Սաֆարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Ստեփանյան

Կ. Ավդալյան

Քարտուղար՝ Է. Մնացականյան